

**ՄԻՊ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԲԽՈՂ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ք. Երևան,

«16» հոկտեմբերի 2018թ.

Համակարգող խորհրդի նիստի նախագահ՝ ՀՀ արդարադատության նախարար, Արտակ Զեյնալյան

Համակարգող խորհրդի նիստի քարտուղար, Ծրագրի համակարգող՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյան

Համակարգող խորհրդի նիստի մասնակիցներ/անդամներ՝

Վաչե Տերտերյան ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ

Արտյոմ Սեդրակյան ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար

Արսեն Մանուկյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ

Հովհաննես Քոչարյան ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ

Անահիտ Ավանեսյան ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

Արամ Ամիրզադյան ՀՀ սիյուռքի նախարարության իրավաբանական վարչության պետ

Նազենի Ղարիբյան ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ

Իրինա Ղափլանյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ

Լուսինե Առաքելյան ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Արամ Նիկոյան ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավար

Անուշ Գասպարյան ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի իրավական ապահովման և վիճակագրության վարչության գլխավոր

	մասնագետ
Վահրամ Կաժոյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության Միջազգային կազմակերպությունների վարչության պետ
Կարինե Սուջյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության մարդու իրավունքների հումանիտար հարցերի բաժնի վարիչ
Մարիա Սիլվանյան	ՀՀ-ում ՄԱԿ-ի գրասենյակ
Տիգրան Գրիգորյան	ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչության պետ
Ալեն Մկրտչյան	ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչության պետի տեղակալ
Աննա Կարապետյան	ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչության արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ

Համակարգող խորհրդի նիստը մեկնարկել է ՀՀ արդարադատության նախարար, համակարգող խորհրդի նախագահ Արտակ Զեյնալյանի բացման խոսքով: Իր խոսքում նախարարը ողջունել է 2018թ. օգոստոսի 22-ի N 1122-Ա ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատված անհատական կազմով սահմանված խորհրդի նոր անդամներին, անդրադարձել 2017թ. մայիսի 4-ին Կառավարության 483-Ն որոշմանը, որով նախատեսվել է Համակարգող խորհրդի ինստիտուտը, ներկայացրել դրա հիմնական նպատակը. այն է՝ գործողությունների ծրագրի կատարման ընթացքը համակարգելը, մշտադիտարկելը և գործողությունների կատարմանը նպաստելը:

Մինչ օրակարգի հարցերին անդրադառնալը, նախարարը հորդորել է Համակարգող խորհրդի անդամներին պահպանել ՀՀ կառավարության N483-Ն որոշմամբ ամրագրված դրույթները, մասնավորապես, ապահովել հաշվետվությունների հրապարակայնությունը համապատասխան պետական մարմնի պաշտոնական կայքէջում:

Իր խոսքում Նախարարն անդրադարձել է նաև Գործողությունների ծրագրի 96-րդ կետով ամրագրված պահանջի կատարմանը, այն է՝ նախարարին կից հանրային խորհրդի նիստի ընթացքում պետք է անդրադարձ կատարել Գործողությունների կատարման ընթացքին: Այդ կապակցությամբ նա խնդրել է բոլոր պատասխանատուներին հանրային խորհրդի նիստի ընթացքում անդրադառնալ իրենց իրավասության ոլորտին առնչվող միջոցառումների կատարմանը, ինչպես նաև հնարավոր խնդիրները և ռիսկերը քննարկել հանրային խորհրդի ներկայացուցիչների հետ:

Նախարարի կողմից արված մյուս դիտարկումը վերաբերել է ՀՀ կառավարության 2018-2022թթ. Գործունեության միջոցառումների 54-րդ կետին, որով ամրագրված է, որ մինչև 2018թ. ավարտն անհրաժեշտ է վերանայել 2017-2019թթ. Գործողությունների ծրագիրը՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ երկխոսության իրականացման միջոցով: Այս համատեքստում, Ա.Ջեյնալյանը տեղեկացրել է, որ Արդարադատության նախարարությունն արդեն իսկ դիմել է բոլոր շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ իրենց գրավոր առաջարկությունները ստանալու նպատակով, ու հորդորել է պետական մարմինների գործընկերներին այս գործընթացում լինել ակտիվ, ներկայացնել նոր կառուցողական առաջարկություններ, իսկ հարկ եղած դեպքում նաև վերանայել իրենց իրավասության ոլորտի միջոցառումների բովանդակությունը և դրանց իրականացման ժամկետները:

Որպես վերջին դիտարկում՝ նախարարը նշել է, որ Կառավարության 483-Ն որոշմամբ ամրագրված է նաև հանրային քննարկումներ անցկացնելու պահանջը և որ Արդարադատության նախարարությունը պլանավորում է նոյեմբեր ամսվա ընթացքում կազմակերպել հանրային քննարկում, որի ընթացքում հասարակական սեկտորի ներկայացուցիչների մասնակցությամբ կքննարկվեն 2017թ.-ի երկրորդ և 2018թ.-ի առաջին կիսամյակի համար նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև Գործողությունների ծրագրի վերանայման ուղղված հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Այնուհետ, օրակարգի համաձայն՝ ՀՀ արդարադատության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ արտաքին գործերի, ՀՀ առողջապահության, մշակույթի և սփյուռքի նախարարությունների ներկայացուցիչները

ներկայացրել են 2018թ. երկրորդ և երրորդ եռամսյակների համար նախատեսված միջոցառումների կատարողականները, ինչպես նաև 2018թ. չորրորդ եռամսյակի ընթացքում իրականացման ենթակա հնարավոր ռիսկային կամ խնդրահարույց կետերը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը ներկայացրել է 2018թ. երկրորդ և երրորդ եռամսյակների համար նախատեսված ՀՀ արդարադատության նախարարությանն իրավասությանն առնչվող միջոցառումները: Մասնավորապես. նախարարի տեղակալն ընդգծել է, որ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերը մշակվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ շահագրգիռ բոլոր կողմերի հետ քննարկումների արդյունքում: Հավելել է, որ օրենքի նախագիծն ուղարկվել է «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) փորձագիտական կարծիքին, որի արդյունքներով, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) և Վենետիկի Հանձնաժողովի կողմից ներկայացված համատեղ կարծիքի հիման վրա նախագծերի էական փոփոխություններ կատարելու, ինչպես նաև շահագրգիռ անձանց հետ հանրային քննարկումներ իրականացնելու նպատակով օրենքի նախագիծը գտնվում է քննարկման փուլում և ՀՀ կառավարության հանձնարարությամբ օրենքի նախագծի մշակման վերջնաժամկետը երկարաձգվել է 80 օրով՝ մինչև 2019թ. հունվարի 23-ը:

Այնուհետև, անդրադառնալով ծանր հիվանդության հիմքով ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին պատժից, իսկ կալանավորված անձին՝ կալանքից ազատելու իրավական կարգավորումների բարեփոխմանն առնչվող միջոցառմանը, նախարարի տեղակալը նշել է, որ ՀՀ ԱՆ կողմից համապատասխան իրավական ակտի նախագիծը մշակվել է, դրվել է շրջանառության մեջ և այժմ գտնվում է կարծիքների ամփոփման փուլում:

Ինչ վերաբերում է ԳԾ-ով նախատեսված ընդհանուր հավասարության ապահովման և խտրականության արգելքի անկախ և արդյունավետ մարմնի ձևավորմանը, Վ. Քոչարյանը նշել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է

«Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթ, որը պաշտոնապես շրջանառվել է և դրվել հանրային քննարկման: Այնուամենայնիվ, հաշվի առնելով փաթեթը գործող Ազգային ժողով ներկայացնելու հետ կապված քաղաքական ռիսկերը, ինչպես նաև որոշ հարցերի շուրջ քաղաքացիական հասարակության հետ քննարկումների շարունակման անհրաժեշտությունը, օրենսդրական փոփոխությունների վերջնական տարբերակի՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետը երկարաձգվել է: Փոխնախարարի խոսքով՝ վերաբերելի օրենսդրության բացակայության համատեքստում չեն մեկնարկել 79-րդ կետի կատարման աշխատանքները:

Փոխնախարարն իր խոսքում արդարադարձ է կատարել նաև այն միջոցառումներին, որոնց շրջանակներում ՀՀ ԱՆ հանդիսանում է համակատարող գերատեսչություն և շեշտել շահագրգիռ գերատեսչությունների հետ համագործակցության անհրաժեշտությունը:

Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը Համակարգող խորհրդին է ներկայացրել նաև ՀՀ արդարադատության նախարարության և Մեծ Բրիտանիայի կառավարության, ի դեմս՝ Արտաքին գործերի և համագործակցության նախարարության (ԱԳՀՆ) միջև 2018թ. հուլիսի 23-ին ստորագրված փոխըմբռնման հուշագրին, որով Մեծ Բրիտանիայի կառավարությունը, ի դեմս ՄԲ արտաքին գործերի և համագործակցության նախարարության, հանձն է առել իրագործել «Աջակցություն Հայաստանի կառավարությանը պատշաճ իրականացնելու Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող Գործողությունների ծրագիրը՝ հասարակությանը կրթելու և շահագրգիռ մարմիններին ընտանեկան բռնությանն առնչվող խնդիրների վերաբերյալ վերապատրաստելու նպատակով» խորագրով ծրագիրը, որն ուղղված է ընտանեկան բռնությանն առնչվող խնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, շահագրգիռ մարմիններին վերապատրաստմանը և ՀՀ կառավարությանը «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի պատշաճ կիրառմանն աջակցելուն: Անդրադառնալով Ծրագրի իրականացման ընթացքին՝ Նախարարի տեղակալը ներկայացրել է Ծրագրով սահմանված հիմնական

գործողությունները, անդրադարձել է ընտանեկան բռնության դեմ պայքարի հաղորդակցության ռազմավարության գաղափարին և դրանով նախատեսված բաղադրիչներին:

Օրակարգի համաձայն՝ **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալը** ներկայացրել է հաշվետու ժամանակահատվածում նախարարության կողմից անցկացված աշխատանքները: Նա անդրադարձել է ՄԻՊ ԳԾ-ի 36, 44, 58, 63, 64, 66, 72, 73, 88, 89, 96 կետերով ամրագրված միջոցառումների կատարմանը: Արսեն Մանուկյանն առանձնացրել է սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայությունների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման համակարգը: Նա նշել է նաև, որ այդ համակարգի միցով մշտադիտարկվել է Արդարադատության նախարարության 22 ոչ առևտրային կազմակերպությունների արդյունավետությունը: Ա. Մանուկյանն առանձնացրել է ցերեկային դպրոցների հարցը, որոնք նախատեսվում է դիտարկել այլ դպրոցների հենքի և փորձի հիման վրա: Վերջինս ներկայացրել է նաև մինչև 2 տարեկան երեխաների խնամքի տրամադրման, ինչպես նաև 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան միանվագ պետական նպաստների վարչարարության, նպաստների դիմումների էլեկտրոնային համակարգի բարելավման հարցը:

Տեղակալը խոսել է նաև զբաղվածության կարգավորման պետական ծրագրերով աշխատաշուկայում անմրցունակ և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուներին պետական աջակցություն տրամադրելու մասին, ներկայացրել է այդ ոլորտում արձանագրված արդյունքները, առանձնացրել տարեցների և հաշմանդամների խնամքի ծառայությունների բարելավմանն ուղղված աշխատանքները Երևանում և մարզերում:

Իր խոսքում նախարարի տեղակալն անդրադարձել է նաև ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում գերատեսչության կողմից իրականացվող միջոցառումներին: Ընդգծելով 2017թ. դեկտեմբերի 6-ին ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի արդյունավետ կիրառման անհրաժեշտությունը՝ նախարարի տեղակալն նշեց, որ ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ մշակվել են շուրջ 7 իրավական

ակտեր, որոնք վերաբերում են բռնության ենթարկված անձանց ուղղորդման մեխանիզմների մշակմանը, ապաստարաններին ներկայացվող պահանջներին, աջակցության կենտրոնի գործառույթներին և այլն:

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալը ներկայացրել է ՀՀ ԿԳՆ իրավասությանն առնչվող ՄԻՊ ԳԾ-ի 47, 50, 51, 83, 91 կետերի վերաբերյալ հաշվետվությունները: Նա նշել է, որ միջոցառումների շրջանակներում մշակվել են երեխաների և ծնողների համար համացանցից օգտվելու ուղեցույցները, երեխաների առցանց անվտանգության ապահովման մասով ուղեցույցը: Իր խոսքում Լուսինե Առաքելյանը նշել է նաև, որ ամեն տարի վերապատրաստում են անցնում հաշմանդամների հետ աշխատող մասնագետները և ուսուցիչները, ավելացել է նաև ուսուցչի օգնականի պաշտոն: Ներկայացված կետերից մեկը վերաբերում էր նաև ազգային փոքրամասնություններին դասավանդող մասնագետներին և նրանց վերապատրաստման անհրաժեշտությանը:

ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետը նշել է, որ ԳԾ 76-րդ կետի համաձայն՝ մշակվել է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» թեմայով ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների ազգային ծրագիրն, որն այժմ գտնվում է քննարկման փուլում:

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալն իր խոսքում անդրադարձավ առողջապահական հաստատություններում գրանցվող մահացության դեպքերի վիճակագրությանը և նշեց, որ բոլոր տվյալները հասանելի են առցանց: Անահիտ Ավանեսյանը հայտնեց նաև, որ պտղի սեռով պայմանավորված պտղի հեռացման մասով անցկացվում են դասընթացներ՝ ուղղված տարբեր թիրախային խմբերին: Մշակվում է նաև պտղի սեռով պայմանավորված հղիության դադարեցման կանխարգելմանն ուղղված 2018-2022թթ. գործողությունների ծրագիր:

ՀՀ սփյուռքի նախարարության իրավաբանական վարչության պետը ներկայացրել է ՄԻՊ ԳԾ-ի 95-րդ կետով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը, ինչպես նաև քննարկման է ներկայացրել «սիրիահայ» եզրույթի իրավական կարգավորման հարցը:

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալը ներկայացրել է առաջարկություններ՝ կապված հուշարձանների տեղափոխման հետ: Նա ներկայացրել է առկա վիճակագրությունը, համաձայն որի վերջին տարիների ընթացքում տեղափոխվել է 5 հուշարձան, ինչը, սակայն, հիմնարար պատճառներ է ունեցել: Նախարարի տեղակալն իր խոսքում նշել է նաև, որ նպատակահարմար է գտնում ներդնելու հատուկ ներառական ծրագրեր, որոնք ոչ միայն կապահովեն մի շարք ներառական մշակութային միջոցառումների իրականացումը, այլև կներգրավեն քաղաքացիներին այդ միջոցառումներում մասնակցությանը: Հաջորդ առաջարկը վերաբերում էր մարզերում մշակութային կյանքի ակտիվացման ծրագրին:

Յուրաքանչյուր հաշվետվության ներկայացմանը հաջորդել են ՀՀ արդարադատության նախարարի նկատառումները կատարման ենթակա միջոցառումների վերաբերյալ:

Հանդիպման ավարտին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, համակարգող խորհրդի քարտուղար Վիգեն Քոչարյանը հորդորել է ներկա պետական կառույցների ներկայացուցիչներին ներկայացնել իրենց ղեկավարած գերատեսչության/մարմնի համապատասխան առաջարկությունները՝ Գործողությունների ծրագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու նպատակով:

Պարոն Քոչարյանը հավելել է նաև, որ ՀՀ արդարադատության նախարարությունը սույն թվականի նոյեմբեր ամսին նախատեսում է կազմակերպել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019թթ. Գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացմանն ուղղված վերապատրաստման դասընթաց:

Միաժամանակ, նիստի ընթացքում քննարկվել են ՄԻՊ Գործողությունների ծրագրում նոր միջոցառումներ ընդգրկելու կամ ամրագրված միջոցառումների բովանդակության, ժամկետների վերանայման վերաբերյալ պետական մարմինների ներկայացուցիչների առաջարկները:

Ինչից հետո, ըստ օրակարգի, տեղի է ունեցել ս.թ. նոյեմբերի 16-ին կայանալիք հանրային քննարկման կազմակերպմանն առնչվող հարցերի քննարկում: